



Միսաք Մեծարեւնց

Մթնշաղներ

Վերջալոյսի աղջիկն է իր կուսութեան մէջ քրքում.
Ինչո՞ւ մինակ մընացի երագիս հետ թախծագին.
Թմբիններու բոյրին տակ, նուտիններու ծաղիկին՝
Ա՛հ, ինչո՞ւ ես մընացի գիրկն երագին այս տրտում:

Ո՛վ դուն հիրիկ ծաղկանոյշ, երբ անցար հետ լոյսերուն,
Բան մը փլաւ հոգւոյս մէջ քայքայումով ողբագին,
Դարձիր քի՛չ մըն ալ Ժպտէ սա լուսաբաղձ հիւանդին՝
Որ քիչ առ քիչ կը մեռնի՛ կառչած իր խօլ յոյսերուն...:

Մութը կ'իջնէ հոգւո՛յս՝ ուր վաղո՛ւց գիշեր է արդէն.
Ըսպասումի՛ր ցայգ՝ ուր դեռ շողաց լո՛յսն երագին.
Հագիւ քիչ մը բոյր ծըծած մոռացումին ես վարդէն
Նորէն քեզի՛ կը դառնամ, ա՛կն արեւիս ոսկեծին:

Լուսնի պայծառ տիւին տակ պիտի համրեմ անդադար,
Բուստէ զարկերն ոգետր՝ առոյգ սիրոյ երագին.
Ա՛հ, քիչ մը լո՛յս, Ժրպի՛տ մը՝ որ կեա՛նք ինծի պիտի տար,
Եւ փարատէր լըքումն՝ որ կը ծանրանայ իմ ուսին:

Եկո՛ւր, արդէն կը մըսի՛ն հեգ երագներն իմ որբուկ,
Ա՛լ յոգնած եմ անցնելէն կածաններէ մենաւոր,
Անձրեւ կ'իջնէ հոգւոյս մէջ, կը զգամ մահուան սրսըփուք,

Ձեռքս է պարսպ մրնացեր դատարկին մէջ սրգաւոր: